ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Ալավերդի և
Բելոռուսի Հանրապետության Պոլոցկ քաղաքների եղբայրության

22 մայիսի 2012 թվական *քաղաք Պոլոցկ*

Կարևորելով միջազգային, տնտեսական և մշակութային կապերի հաստատումն ու զարգացումը, ինչպես նաև վստահության, փոխըմբռնման և բարեկամության ամրապնդման նպատակով Հայաստանի Հանրապետության Ալավերդի քաղաքը՝ ի դեմս քաղաքապետ Արտավազդ Սուրենի Վարոսյանի և Բելոռուսի Հանրապետության Պոլոցկ քաղաքը՝ ի դեմս քաղաքային գործադիր կոմիտեի նախագահ Ալեքսանդր Գրիգորիի Պոզնյակի, կնքեցին Ալավերդի և Պոլոցկ քաղաքների միջև բարեկամության մասին սույն պայմանագիրը:

Կողմերը Հայաստանի Հանրապետության և Բելոռուսի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան իրենց իրավասության շրջանակներում հավասարության և գործընկերության սկզբունքներով պետք է նպաստեն.

- տնտեսական, գիտա-տեխնիկական, մշակութային և հումանիտար երկկողմ համագործակցության հաստատմանն ու ընդլայնմանը.
- տնտեսվարող սուբյեկտների միջև, անկախ սեփականության ձևից, ուղիղ կապ հաստատելու համար պայմանների ստեղծմանը.
- գիտության, կրթության, մշակույթի, սպորտի, տեղեկատվության ոլորտներում համագործակցությանը.
- ներդրումային և ինովացիոն գործունեության զարգացմանը.
- ուսումնական հաստատությունների, մշակույթի և սպորտի հիմնարկների, թանգարանների և թատրոնների, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների ուղիղ կապի ստեղծմանը և զարգացմանը.
- տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, ինչպես նաև տարբեր ոլորտների մասնագետների փորձի փոխանակմանը.
- կողմերի միջև համաձայնեցված այլ տեսակի համագործակցությանը:

Սույն պայմանագիրը անժամկետ է և ուժի մեջ է մտնում ստարագրման պահից: Պայմանագիրը կազմված է հայերեն և ռուսերեն լեզուներով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր ուժ, երկուական օրինակ կողմերի համար:

ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ՊՈԼՈՑԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա.Գ. ՊՈԶՆՅԱԿ